բակին գնացաք ի մահտեսի Մեղբեստրոս աղայի Եալին. երկու օր անդ մնալով, և գնացաք Յուսկուտար. և անտի ի նոյեմբերի չորս եկաք ի Պալատու եկեղեցին, զոսն սրբոյ Հրեշտակապետացն անդ կատարելով. եւ յետոյ զաղքատութիւնս մեր նոցա յայտնեցաք, և յօրն կիրակէին ծանուցմամբ սկսաք խմպաթիէ հաւաքել. զոր Տէրն ամենայնի զբարին յաջողեսցէ. ամէն.

Եւ մինչդեռ աստ ի Պալատն էաք, ի դեկտեմբերի տասն, Սոկէդրէ խոց մեծն դարձեալ ի պատերազմէն՝ ընդ երեկս եմուտ ի քաղաքս. և ի սոյն ամսոյ տասներկու օրն, փոխանորդն արքայի՝ Մոհսուն օղլի կոչեցեալն մեծ սանձախով երեւելի փառաւք եւ ալայի- եմուտ ի քաղաքս, և գընաց ի պալատն արքունի, և այլ ոչ ել, զի առին զսանձախն և զկնիքն ի նըմանէ, և յընչից մերկացուցեալ՝ տարագրեցին ի Սելէնիկ. և փոխանակ նորա եղեւ ժանտն խայմախամ՝ հակառակն մերս եկեղեցւոյ և օրինաց. և զարմանք կալաւ զամենեսին։ Եւ ի սոյն ամսոյ, ի կիրակի լոյս երկուշաբթի, ի չորրորդում ժամու գիշերոյն յարեւելեան կողմն սրբոյ Հրեշտակապետաց եկեղեցւոյն մերձ եղեւ սաստիկ էանդուն, և բազում տունք և խանութք և մահտեսի Մելքոնի տունն այրեցան. բայց շնորհօքն Աստուծոյ և բարեխօսութեամբ մեծաց սրբոց Հրեշտակապետացն՝ սուրբ եկեղեցին ազատեցաւ, և գոհացաք զԱստուծոյ. և մեք զոր ինչ ժողովեալ էաք տուաք սուրբ եկեղեցւոյն, չորս հարիւր ղուրուշ, զի այնպէս խոստացաք յայնմ ժամու նեղութեան, և Աստուծով կատարեցաք։ Եւ անտի ելեալ դատարկ և խղճուկ եկաք ի նոր Աստուածածնի եկեղեցին, և զոսն սուրբ Օհաննէսեան Տեառն մերոյ անդ կատարեցաք ընդ առաւօտն. մեզաւորս ժամարար։

Եւ ի յունվարի ինն գնացաք ի սուրբ Գէորգայ եկեղեցին, և ի նոյն ամսոյ քսանի լուսաբ թէ ֆէրմանով չէ՞ գնաց Յերզրում առ ի բերել էհլիարով աստ զԿաթողիկոսացու Պազար վարդապետն. զի տեղւոյ փաշայն ոչ է թողեալ գնալ ի սուրբ Էջմիածին, թէ ֆէրման ոչ ես առեալ գնալոյ. անդ արգելեալ և աստ արդ արարեալ. վասն որոյ գնացին ի բերել ի Սամսիոլ. և մեր ի սուրբ Աստուածածնի եկեղեցին եկեալ շատ աշխատեցաք առ ի դարձուցանել զչէ՞ն կաշառս բազում խոստանալով, և չեղեւ հնար։ Եւ ի փետրվարի երկու լուսաբ թէ ըմբռնող փաշայն մեռեալ է, և ինքն ազատեալ գնացեալ է. և հասեալ անդ՝ ձեռնադրեալ Կաթողիկոս և նստեալ ի սուրբ Աթոռն. փառք փրկողին։

Ի յաջորդն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յուլիս ամսոյ 6 ին Աւստրիոյ Վեհափառ Կայսեր Ֆրանսոա Յոզէֆ Ա. տարեդարձը խիստ փառաւորութիւնք կատարեցաւ ի սուրբ քաղաքս նոյն տերութեանը հոյակապ հիւպատոսարանին մէջ։ Երուսաղէմի վեհափայլ կառավարիչը ոչ միայն ի պաշտօնէ այցելութեան երթալով սովորական բարեմաղթութիւնները ըրաւ, այլեւ զինուորական երաժշտաց խումբը խրկած էր հոն, որ գեղեցիկ ներդաշնակութեամբը թէ ըզհանդիսաւորները զուարճացոյց եւ թէ մեծ պատիւ ըրաւ բարեկամտերութեան ներկայացուցիչ մեծապա-

digitised by A.R.A.R.@

տիւ Փասքալ Յակոբ աղա Մուրատեանին, որ ինչպէս ուրիշ անգամ ըսած եմք, Աւստրիոյ հիւպատոսարանի քարտուղարն ըլլալով՝ այս անգամ մեծապատիւ Վալէքէր հիւպատոսը հայրենիքը մեկնելուն՝ իւր տեղը փոխանորդ կարգեց։

— Յիշեալ Թուականէն երկու օր առաջ, Աղէքսանդրիոյ աւստրիացի երեւելի վաճառականի մի խանութ գողեր մտնելով, և զարդուց վերաբերեալ Թանկագին ապրանքներ գողցած ըլլալով, ինչպէս ուրիշ տեղեր՝ նոյնպէս եւ հոս լուր խրկուած էր առ յիշեալ մեծապատիւ փոխ—հիւպատոս Յակոբ աղայն, որ անմիջապէս հետազօտութեան ետեւէ լինելով՝ քանի մի կտոր բան յայտնեց, զորոնք հոս ժամագործի ծախած էին անարդ գիներով, և իրենք աներեւոյթ եղած էին։ Յիշեալ ապրանքները ձեռք բերելով՝ խրկեց իւր տիրոջը։

— Օգոստոս ամսոյն 15 ին քաղաքացի այլազգի երիտասարդի մի ըսպաննուած մարմինը բերին հոս, որ 15 օր առաջ Թամարացի ըսուած վրանաբնակ ժողովրդոց քով գացած էր առուտուրի համար իւր մէկ ընկերոջը հետ։ Այս վերջինը իմանալով անոր մօտակայ վրանի տակ չարաչար սպաննուիլը, անմիջապէս ձի հեծնելով կը փախչի՝ հետը ունենալով 200 մաճառ ոսկին, զոր ընկերին քով կարծելով սպաններ էին։ Չարագործը Յորդանանու կողմերը շունչը առնելով՝ ազատ կը համարի իւր հետամուտներէն։

— Աղէքսանդրիա բնակող կեսարացի Աշրդեան մեծապատիւ և բարեպաշտօն Յակոբ աղայն, որ անցեալները սուրբ Աթոռոյս մէջ տրպուած գրքերէն մէկ մէկ օրինակ նուէր ընծայեր էր Թալասու դպրոցին, այս անգամ եւս բարեհաճեցաւ մէկ օրինակ Սիոն նուիրել յիշեալ դպրոցի Արշակունեաց ընկերութեան։

Ամենապատիւ Տ. Տ. Եսայի Սրբազան Պատրիարքը օգոստոս ամսոյ 21 ին ի Յոպպէ մեկնեցաւ, որոյ նպատակն է՝ եղած և ըլլալիք շինութիւններն ու նորոգութիւնները աչքէ անցընել։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Կիրք քան թէ ճշմարտութիւն՝ առաջնորդեն լեզուի և գրչի բաղմաց։

Փառասիրութեան և ընչաքաղցութեան կիրք չծերանան երբէք։

Փառասէրք կարգեն զգնացս իւրեանց ոչ ըստ միտս՝ այլ ըստ օգտի իւրեանց։

Օրէնք չեն յառաջատեսս ամենայն դիպուածոց, վասն որոյ իշխանաւորք կարող են զթերին ընուլ զօրինացն, և եւս փոփոխութիս իսկ մուծանել։

Լն արք՝ որք քաջ գիտեն ձգել ըզտիմար բաղմութիւնն ի զարմացումն իւրեանց, այլ են ապարդիւն։

Օրն շուք ոչ ստանան մեծարուանձինք, եթէ փոխանակ յաչաց հանելոյ զմիմեանս ստորաքարշ չարութեամբ, ջանայցեն ընդհակառակն բարձրացուցանել զարարս միմեանց փոփոխակի։

Մեծարանք ընծայեալք առաքինութեան, ճշմարիտ տանջանք են նախանձու։

Համարձակութիւն ընդ գիտութեան լծորդեալ՝ է վտանգաբեր, ընդ անգիտութեան՝ եւ մահաբեր։

ՀՐԱՄԱՏԵՑՈՒ ՏՊԱԳՐԵԼ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒ Ս. ԳԱՌՈՒՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՍԱՅԻ ՍՐԲԵՊԻՍԿՊՈՍ

digitised by A.R.A.R.@